

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

18 Փետր. 1999, Հինգշաբթի տեղի ունեցաւ Վարդանանց հերոսամարտի տոնակատարութիւնը Երուսաղէմի ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահին մէջ: Հանդիսութեան կը նախագահէր Պատրիարք Սրբազան Հայրը, Ամեն. Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան, նոյնպէս ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան Պատուոյ հիւպատոս, մեծայարգ տիար Յոլակ Մոմենան, հոգեւոր հայրեր եւ համայնքէն կոկիկ բազմութիւն մը:

Հանդիսութիւնը բացուեցաւ ժառանգաւորաց Վարժարանի եւ Հայաստանի Հանրապետութեան յաջորդական օրհնագներով՝ «Սիրտ ի Սիրտ» եւ «Մեր Հայրենիք»: Բնմը զարդարուած էր անմահն Վարդան գօրավարի դիմանկարով եւ Եղիշէ պատմագրի պատգամով «Մահ իմացեալ անմահութիւն է, մահ ոչ իմացեալ մահ է»։ «գիտակցական մահը անմահութիւն է, ոչ գիտակցական մահը մահ է»:

Գերշ. Տ. Արիս Եպս. Շիրվանեան, վերառնալով ժառանգաւորաց Վարժարանի, բացումը կատարեց օրուայ հաւաքոյթին, նշեց բացառիկ նկարագիրը Վարդանանց հերոսամարտին, իբրեւ ներշնչարան ազգասիրութեան, հայրենասիրութեան եւ եկեղեցասիրութեան: ՏԲ. Գ. Մաղոյեան ներկայացուց օրուայ ծրագիրը, հրաւիրելով ժառանգաւորաց սան՝ Յովնան Բաղդասարեանը բանախօսելու: Յովնան Բաղդասարեան, իր խօսքին մէջ, յիշեց Բաշմ Վարդանը իբր անձնագոհ մարտիկ. ազատութեան խորհրդանիշ, ազգային արժէքներու պահակ, որ Հայկ Նահապետէն վերջ, ուղղութիւն տուաւ ապագայ հայ մարտերու:

Գր. Վարդապարեան երգեց «Դէ եմաման», Վ. Սարգիսեան կարգաց եղիշէի

«Վասն Հայոց Պատերազմ»էն հատուած մը:

Ժառանգաւորաց Վարժարանի սաները երգեցին հետեւեալ երգերը «Լուեց» խօսք Ռ. Պատկանեանի, երաժշտութիւն Շահմալեանի, «Նորից ոտի», «Հէյ քաջ զինուորներ» խօսք Պ. Կարապետեանի, երաժշտութիւն Սո. Շախարեանի, «Սարտարապատ» խօսք Պ. Սեւակի, երաժշտութիւն Յովհաննէսեանի, «Արագիլ», «Հայ Բաշմ» «Վարդան Մամիկոնեան» Տարօնացի Թ. Գալստեան, Եղիվարդի «Կարմիր Ջորավարէն» հատուած մը կարդաց ժառանգաւոր սան Յարութիւն Եղիայեան, եւ ժառանգաւորացի պարի համոյթը կատարեց խմբապարեր: Պատրիարք Սրբազան Հայրը, ներկայացուց Վարդանանց ազատամարտիկները իբրեւ գիտակցական մահուան համար գոհաբերուողներ, որոնք նախընտրեցին արիւնքիւն եւ հայրենասիրութիւնը, բան պարտաւորականութիւնը եւ նահանջողական ոգին, եւ իրենց գիտակցական մահով բարոյական հիմը դրին ապագայ նուաճումներու:

Այս հանդիսութեան բեմադարձարման, երաժշտութեան եւ պարի մարզին մէջ իրենց մասնակցութիւնը բերին, Տ. Ընծանուէր Աբղ. Բարախանեան, երգչախումբի ղեկավար Վ. Փիրումեան, ծայնամարզիչ Վ. Մարգարեան, դաշնակ Տ. Վարդապարեան, Նուէն Սողոսեան եւ պարուստյոյ Տ. Սահակեան:

Հանդիսութիւնը վերջացաւ Պատրիարք Սրբազան Հօր պահպանիչով եւ Հայր Մերով եւ ներկաները մեկնեցան սրահէն, ազգային մարտի մը առթած խանդավառութեամբը եւ պատգամովը:

ԱՆՈՒՇԱԿԱՆ Ծ. ՎՐԻ. ԶՂՋԱՆԵԱՆ